



## 12 քայլ դեպի անվտանգ և արժանապատիվ մայր-մանուկ-ընտանիք մայրական խնամք (ամփոփ տարբերակ)

### Քայլ 1

Յուրաքանչյուր կնոջ և նորածնի հետ վերաբերվել կարեկցանքով, հարգանքով և արժանապատվությամբ, առանց ֆիզիկական, բանավոր կամ էմոցիոնալ բռնության՝ տրամադրելով մշակութային անվտանգ և զգայուն խնամք, որը հարգում է անհատի սովորույթները, արժեքները և ինքնարտահայտման իրավունքները, տեղեկացված ընտրությունը և գաղտնիությունը:

### Քայլ 2

Հարգել հղիության ընթացքում յուրաքանչյուր կնոջ ոչ խտրական, անվճար և առնվազն մատչելի խնամք ստանալու իրավունքը՝ հասկանալով, որ ոչ մի դեպքում չի կարելի կնոջը կամ երեխային զրկել խնամքից կամ ծնունդից հետո նրանց պահել վճարում չկատարելու պատճառով:

### Քայլ 3

Պարբերաբար տրամադրել Մայր-մանուկ-ընտանիք մայրական խնամքը: Ներառել արժեքի և համագործակցության վրա հիմնված խնամք, որը հիմնված է ապացույցներից եկող ընթացակարգերի վրա և առաջնորդվում է առողջական կարիքներով, ակնկալիքներով, առողջության արդյունքներով և ծախսերի արդյունավետությամբ:

### Քայլ 4

Ընդունել ծննդաբերության և բուն ծնունդի ընթացքում շարունակական աջակցություն ստանալու մոր իրավունքը և տեղեկացնել նրան դրա առավելությունների մասին: Համոզվել, որ նա նման աջակցություն կստանա իր նախընտրած խնամատուներից և գործընկերներից:

### Քայլ 5

Որպես անվտանգության առաջին տարբերակներ առաջարկել ծննդաբերության ընթացքում ոչ դեղորայքային հանգստացնող և ցավազրոգ միջոցներ: Եթե առկա են և պահանջվում են դեղորայքային ցավազրկման տարբերակներ, բացատրել դրանց օգուտներն ու ռիսկերը:

### Քայլ 6

Տրամադրել փաստերի վրա հիմնված ընթացակարգեր, որոնք ամբողջ հղիության ընթացքում շահեկան են Մայր-մանուկ-ընտանիքի համար:

### Քայլ 7

Խուսափել հնարավոր վնասակար ընթացակարգերից և գործելակերպերից, որոնք չունեն բավարար ապացույց այն մասին, որ նորմալ հղիության, ծննդաբերության, բուն ծնունդի, հետծննդյան և նորածնային շրջանում ակնկալվող օգուտն ավելին է, քան ռիսկերը:

### Քայլ 8

Իրականացրել միջոցառումներ, որոնք բարելավում են առողջությունը և կանխարգելում են մայր-մանուկ-ընտանիք միավորի հիվանդությունները, ներառյալ լավ սնունդը, մաքուր ջուրը, սանիտարական պայմանները, հիգիենան, ընտանիքի պլանավորումը, հիվանդությունների և բարդությունների կանխարգելումը, նախածննդյան և հետծննդյան կրթությունը:

### Քայլ 9

Անհրաժեշտության դեպքում տրամադրել համապատասխան մանկաբարձական, նորածնային և շտապ բուժօգնություն: Ապահովել, որ անձնակազմը վերապատրաստված լինի (հնարավոր) վտանգավոր պայմաններն ու բարդությունները ճանաչելու և Քայլ 10-ի արդյունավետ բուժում կամ կայունացում ապահովելու համար, ինչպես նաև ստեղծել կապեր խորհրդատվության, անվտանգ և արդյունավետ ուղղորդման համակարգ ունենալու համար:

### Քայլ 10

Նվիրված անձնակազմի հավաքագրման և պահպանման համար վարել մարդկային ռեսուրսների աջակցության քաղաքականություն: Ապահովել, որ անձնակազմը լինի ապահով, հարգված և հնարավորություն ունենա դրական աշխատանքային միջավայրում կանանց և նորածններին ապահովել պատշաճ, գործակցային, անհատականացված խնամքով:

### Քայլ 11

Ապահովել գործակցային շարունակական խնամք բոլոր համապատասխան առողջապահական ծառայություններ մատուցողների, հաստատությունների և կազմակերպությունների հետ, որոնք կապի, խորհրդատվության և ուղղորդման համար ունեն հաստատված պլաններ և լոգիստիկա:

### Քայլ 12

Խթանել կրծքով կերակրումը և մաշկը մաշկին շփումը: Տես «Երեխաներին հարմարեցված հիվանդանոց» վերանայված նախաձեռնության 10 քայլերը և դրանք ներառեք գործընթացի վերապատրաստման և քաղաքականության մեջ: